ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը**

Կարինե Քարամյան

Քնքուշ Մովսիսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

*Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ*

*Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի առաջատար մասնագետ*

**Գործուղման վայրը և ժամկետները**

Բուդապեշտ, Հունգարիա, 2022 թվականի նոյեմբերի 28 -ից դեկտեմբերի 1-ը

**3. Հրավիրող կողմը**

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ)

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

2022 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության կողմից կազմակերպվել է «Անդրսահմանային անվճարունակության ընթացակարգերի գործնական կիրառում» խորագրով համաժողով, որին հրավիրված էին ՀՄՆԿ (IOTA) բոլոր անդամ-երկրները, այդ թվում՝ ՀՀ, Ադրբեջան, Բելգիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Հունաստան, Հունգարիա, Լիտվա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Միացյալ Թագավորություն:

Համաժողովի գլխավոր նպատակն էր ավելացնել շահագրգիռ/մասնակից երկրներում անդրսահմանային սնանկության վերաբերյալ գիտելիքները և փորձի փոխանակման շնորհիվ նպաստել IOTA անդամ երկրների հարկային մարմինների միջև ավելի մեծ փոխգործակցության բարձրացմանը:

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն է տվել ձեռք բերել գործնական փորձ ու գիտելիքներ այլ իրավասության տարածքում իրականացվող անվճարունակության ընթացակարգերում որպես պարտատեր հաջողությամբ հանդես գալու մեթոդների վերաբերյալ և ծանոթանալ ՀՄՆԿ անդամ երկրներում առկա գործնական փորձին:

Միաժամանակ, ներկայացվել են տարբեր ԵՄ և ոչ ԵՄ անդամ երկրների կողմից իրենց ռազմավարական ծրագրերում ներառված նշված նպատակի իրագործմանն ուղղված միջոցառումները:

Նշված գիտելիքներն էական նշանակություն ունեն Հայաստանի հարկային մարմնի կողմից անդրսահմանային սնանկության վարույթների շրջանակներում առկա պարտքի արդյունավետ հավաքագրման համար:

Միջոցառումը կազմակերպվել է նոր ձևավորված Հաղորդակցության ֆորումի աշխատանքների շրջանակներում: Ֆորումի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ յուրաքանչյուր տարի՝ տարեկան մեկ անգամ, ֆորումի գործունեության ողջ ընթացքում:

## 5. Քննարկված թեմաները

Միջոցառման հիմնական նպատակն էր քննել և քննարկել սնանկության անդրսահմանային ընթացակարգերի դեպքերը, որոնց կիրառումը հանգեցրել է պարտավորությունների հաջող հավաքագրմանը: Նշված միջոցառումը հնարավորություն տվեց ծանոթանալու այլ երկներում առկա սնանկության վարույթները կարգավորող օրենսդրական կարգավորումներին, սնանկության վարույթներով պարտավորությունների հավաքագրման մեխանիզմներին:

## 6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ելույթներ են ունեցել Բելգիայի, Հունաստանի, Նորվեգիայի, Լիտվայի, Պորտուգալիայի, Շվեդիայի ներկայացուցիչները: Ներկայացվել են հետևյալ զեկույցները.

1) Բելգիայում առկա սնանկության գործերով կառավարիչներին վերահսկող կազմակերպությունները և պետական մարմինները ,
2) Հունաստանում առկա սնանկության տեսակները,
3) Լիտվայի կողմից ներկայացված՝ Լիտվայի և Նորվեգիայի միջև առկա անդրսահմանային սնանկության վարույթը, որով Լիտվան ստացել է պահանջի մասնակի բավարարում,
4) Պորտուգալիայում առկա սնանկության ավարտից հետո պարտավորությունների դուրս գրման եղանակները,
5) Ֆինլանդիայի հարկային մարմի կառուցվածքը և վարչակազմը,
6) Շվեդիայի միջազգային աշխատավարձի երաշխիքները:

Բացի ներկայացված զեկույցներից համաժողովի շրջանակներում կազմակերպվել են քննարկումներ, որոնց շրջանակներում մասնակիցները կիսվել են իրենց փորձով, ձեռքբերված արդյունքներով և հնարավոր բացթողումներով: Մասնավորապես, քննարկվել են հետևյալ հյարցերը.

1) Հիմնական դժվարությունները, որոնց հարկային մարմինները բախվել են, երբ հանդես են եկել որպես պարտատեր անդրսահմանային սնանկության վարույթներում,

2) Եղանակները, որոնց շնորհիվ կարող են ընդլայնվել համագործակցության շրջանակները ԵՄ և ոչ ԵՄ անդամ երկրների միջև անդրսահմանային սնանկության վարույթներ իրականացնելիս,

3) ԵՄ-ում անդրսահմանային անվճարունակության վարույթի հիմնական մարտահրավերները,

4) Անդրսահմանային համագործակցության ընդլայման մեթոդները,

5) Անդրսահմանային սնանկության վարույթներում առկա վերակազմակերպման ընթացակարգերի հիմնական խնդիրները,

6) Անդրսահմանային սնանկության վարույթներում առկա վերակազմակերպման ընթացակարգերի իրականացման ընթացքում առկա մարտահրավերների հաղթահարման մեթոդները:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել և որոշումներ չեն ընդունվել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Որպես համաժողովի ամփոփում, քննարկվել է հաջորդող հանդիպումների օրակարգը, հետագա թեմաները, որոնք պետք է դրվեն Հաղորդակցության ֆորումի հիմքում:

Առաջարկվել է հետագա հանդիպումների ընթացքում քննարկել համաժողովի ընդացքում փոխանակված փորձի կիրառված լինելու հաջող և անհաջող դեպքերը:

Միաժամանակ, կարևորվել է փորձեր ձեռնարկել զարգացնելու ԵՄ և ոչ ԵՄ անդամ երկրների միջև համագործակցությունը, որը հնարավորություն կտա ժամանակին իրազեկվելու այլ եկրներում առկա սնանկության վարույթների մասին:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Կարինե Քարամյան

05.12.2022թ.